

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»



ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և

կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

գլխավոր տնօրեն, Բ. Գ. Թ.

ԱՐՏԱՎԱՋԴ ՎԱՆՅԱՆ

« 06 » մայիսի 2021թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

Ա Ռ Ա Ջ Ա Տ Ա Ր Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Յ Ա Ն

Կարինե Սամվելի Քոչարյանի

«Վարակի համաճարակաբանական հսկողության առանձնահատկություններն ու
խնդիրները մանակական բազմապրոֆիլ ստացիոնարում»
ԺԴ.00.16 «Համաճարակաբանություն» մասնագիտությամբ
բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման համար առենախոսության վերաբերյալ

1. Առենախոսության թեմայի արդիականությունը, նորույթը և հիմնավորման աստիճանը

Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների (ԲՄՊՎ) կանխարգելումը առողջապահության ու բժշկագիտության զարգացման գրեթե բոլոր փուլերում պատկանել է կարևոր հիմնահարցերի շարքին, ընդ որում այսօր էլ շարունակում է մնալ այդպիսին՝ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների առողջապահական համակարգերի համար: Դա կապված է ԲՄՊՎ-ով պայմանավորված հիոանդացության, մահաճության բարձր մակարդակի, ինչպես նաև նրանցով հասցված սոցիալ-տնտեսական վնասների հետ: Այսպես օրինակ, զարգացած երկրներում յուրաքանչյուր տարի տասնյակ հազարավոր մարդիկ մահանում են ՕԼԲՊՎ-ի հետևանքով:

ԲՄՊՎ-ի կանխարգելման առունով մեծ ուշադրություն է սևեռվում ստացիոնարներում վարակի հսկողության խնդրին: Կարևորվում է այն փաստը, որ հակաբիոտիկների չափից ավելի և անվերահսկելի օգտագործումը նպաստում է դեղորայքակայուն մանրէների առաջացմանը, որոնք էլ շատ հաճախ դառնում են ԲՄՊՎ-ի զարգացման պատճառ: Օգտագործվող հակաբիոտիկների հանդեպ բակտերիաների բազմադեղակայունությունը, հանդիսանում է այսպես կոչված հիվանդանոցային շտամերի բնորոշ հատկանիշ: Այսօր բավականին ընդլայնվել է ԲՄՊՎ-ի պատճառագիտական գործոնների շարքը՝ գրամբացասական մանրէների նոր տեսակների ի հայտ գալու շնորհիվ: Ապացուցվել է մոտ 25 նոր տեսակի պայմանական-ախտածին միկրոօրգանիզմների դերը և վերջին տասնամյակների ընթացքում նկատվում է հարուցիչների առանձին խմբերի և տեսակների տեսակարար կշռի փոփոխություն:

Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների հարցը բավականին կարևորվում է մանկական բազմապրոֆիլ ստացիոնարի համար, որտեղ վերջինների զարգացումը պայմանավորվում է մի շարք գործոնների առկայությամբ, ընդ որում խնդիրը առանց բացառության վերաբերվում է բոլոր մանկական բաժանմունքներին: ԲՄՊՎ-ի դեպքերի տարածվածությունն ու պատճառագիտական կառուցվածքը մեծապես կախված են բաժանմունքի բնույթից: Հարկ է նշել, որ ԲՄՊՎ-ի վերաբերյալ գիտական աշխատանքների շարքում գերակշռում է մեծահասակների շրջանում վարակի ուսումնասիրությունը, իսկ Հայաստանում մանկական բաժանմունքներում նման հետազոտություններ ընդհանրապես չեն իրականացվել: Ելնելով վերոգրյալից, ակներև է գրախոսվող ատենախոսության, կարևորությունը և արդիականությունը, ինչը բավականին հստակ հիմնավորված է աշխատանքում:

2. Ատենախոսության բովանդակությունը և ձևավորման գնահատականը

Ատենախոսությունը կառուցված է ավանդական ձևաչափով՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան, շարադրված է 115 էջում, բաղկացած է օգտագործված հապավումների ցանկից, ներածությունից, «Գրականության տեսություն» գլխից (4 ենթագլուխներով), «Նյութը և մեթոդները» գլխից (7

եզրահանգումներից, գործնական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից (որը ներարում է գրականության աղբյուրների 174 անվանում), 1 հավելվածից: Աշխատանքը լուսաբանված է 3 աղյուսակում և 17 նկարում:

Աշխատանքի բովանդակությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է ատենախոսությունում դրված գիտական նպատակներին և առաջնայնություններին:

Հետազոտվող հիմնախնդրին լիովին տիրապետումը թույլ է տալիս հեղինակին ներածությունում գրագետ հիմնավորել աշխատանքի արդիականությունը, ներկայացնել աշխատանքի նպատակը և ձևավորվել հետազոտության 4 խնդիրները: Տվյալ բաժնում նշվում է աշխատանքի գիտական նորույթը, գործնական արժեքը, գործնական ներդրումը, պաշպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

«Գրականության տեսություն» գլխի 4 ենթագլուխներում՝ աշխատանքի նպատակին և խնդիրներին համապատասխան, բավականին մանրակրկիտ ներկայացված են ժամանակակից գիտական տվյալներ՝ մանկական բազմապրոֆիլ ստացիոնարում ներհիվանդանոցային վարակի առանձնահատկությունների, ատացիոնարներում շրջանառող հիմնական պայմանական-ախտածին մանրէների, վարակի փոխանցման գործում բուժանձնակազմի ձեռքերի դերի, ինչպես նաև արյան հունի վարակիչ հիվանդությունների զարգացման դեպքում ներանոթային կաթետերների դերի վերաբերյալ: Տվյալների շարադրումը վկայում է, որ հայցորդը վարժ տիրապետում նյութին:

Կ.Ս.Քոչարյանի հետազոտություններն աշխատատար և բազմաբնույթ են: Հարկ է նշել, որ իրականացվող հետազոտություններին հեղինակը ցուցաբերել է մեթոդաբանորեն գրագետ մոտեցում, ինչը ներկայացված է «Նյութը և մեթոդները» գլխում: Մանրէաբանական հետազոտությունների նյութը առանձնանում է բավականին մեծ ծավալով (արյան նմուշներ, ներանոթային կաթետերներ, լվացուկներ արտաքին միջավայրից և ձեռքերից): Դասական համաճարակաբանական և մանրէաբանական մեթոդների կիրառման հետ զուգահեռ՝ ելնելով միջազգային չափանիշներից, վերլուծվել են մետոցիլին կայուն

կլոնի ուսումնասիրության արդյունքները, իրականացվել է ֆիլոգենետիկ պարզաբանում: Նյութի վիճակագրական մշակման մեթոդները համապատասխանում են ժամանակակից մոտեցումներին:

Աշխատանքի արդյունքները ճշգրիտ խմբավորված և շարունակաբար շարադրված են սեփական հետազոտությունների չորս գլուխներում: Այսպես, մանրամասն վերլուծվել է վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական բնութագիրը մանկական բազմապրոֆիլ ստացիոնարի ընդհանուր հիվանդացության կառուցվածքում: Ժամանակակից մոլեկուլային համաճարակաբանության տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում աշխատանքի չորրորդ գլխի նյութը՝ մանկական բազմապրոֆիլ ստացիոնարի շրջակա միջավայրից և հիվանդների կենսանյութերից անջատված մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկերի գենոմի ամբողջական ուսումնասիրության արդյունքները: ԲՄՊՎ-ի հսկողության առումով ոչ պակաս կարևոր է՝ հաջորդիվ ներկայացված, պայմանական-ախտածին մանրէներով բուժանձնակազմի ձեռքերի գաղութայնացման պատկերի նկարագիրը և դրա նվազեցման ուղիները: Հետաքրքրություն են ներկայացվում ներանոթային կաթետերների ախտահարվածության նվիրված հետազոտությունները, արդյունքում հայտնաբերված պայմանական-ախտածին մանրէների դերի պարզաբանումը արյան հունի վարակիչ հիվանդությունների փոխանցման գործում:

Աշխատանքի հիմնական արդյունքները մանրամասն շարադրված են «Ամփոփում» գլխում և ամփոփված են եզրահանգումներում՝ ներկայացնելով հեղինակի կողմից առաջադրված խնդիրների լուծումը:

3. Ատենախոսության արդյունքների նշանակությունը գիտության ոլորտում, դրանց օգտագործման հնարավորությունները

Անկասկած են աշխատանքի գիտական նորույթը և գործնական արժեքը: Բավականին կարևորվում է մանկական բազմապրոֆիլ հիվանդանոցի ընդհանուր հիվանդացության կառուցվածքում վարակիչ գործոնով պայամանավորված հիվանդությունների դերի որոշումը: Հատուկ ուշադրության են արժանի առաջին անգամ ՀՀ-ում սատարված՝ հիվանդանոցի բաժանմունիներից և հիվանդներից

անջատված մետոցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկերի շտամների գենոմի ամբողջական սեկվենավորման և ֆիլոգենետի ուսումնասիրման նվիրված հետազոտությունները, որոնց արդյունքում հայտնաբերվել է միայն Հայաստանի համար յուրահատուկ կլոն, ինչը թույլ է տալիս վարակի հսկողության առավել նպատակաուղղված և ճիշտ իրականացում: Հեղինակի կողմից առաջին անգամ ՀՀ-ում գնահատվել է բուժանձնակազմի ձեռքերի հիգիենայի բազմաբաղադրիչ ծրագիրը, ինչպես նաև պարզաբանվել է ներանոթային կաթեթերների դերը կաթեթեր-ասոցացված վարակի փոխանցման գործում:

Հետազոտությունների արդյունքների հիման վրա բնութագրվել են մանկական բազմապրոֆիլ ստացիոնարում բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների փոխանցման և պատճարագիտական հիմնական գործոնները, մշակվել են կանխարգելիչ միջոցառումներ, որոնց գործնական ներդրումը հնարավորություն է ընձեռում բարձրացնել վարակի ներհիվանդանոցային տարածման կանխման արդյունավետությունը:

4. Սեղմագրի համապատասխանությունը ատենախոսության հիմնական դրույթներին

Ատենախոսության սեղմագրում և 9 տպագրված գիտական աշխատանքներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Բարձր գնահատելով գրախոսվող աշխատանքը, ակնկալում ենք հայցորդի պատասխանը հետևյալ հարցերին.

1. Արդյոք՞ արտահիվանդանոցային MRSA-ը ավելի նվազ վիրուլենտ չէ, քան հիվանդանոցայինը, հաշվի առնելով, որ հիվանդանոցայինը ավելի շատ է շփվում հակամանրէային դեղերի հետ:
2. Ձեր կողմից հայտնաբերված MRSA-ի նոր կլոնը արդյոք՞ ներմուծել էք մետոցիլին կայուն ստաֆիլոկոկերի միջազգային ռեֆստորի մեջ:
3. Ունեցել՞ եք արդյոք գործնական խոչընդոտներ ձեռքերի հիգիենայի գործընթացը բուժհաստատությունում ներդնելու ընթացքում: Եթե այո, ապա ինչպիսի՞ խոչընդոտներ եք ունեցել և կան արդյոք Ձեր կողմից մշակված դրա հաղթահարման հնարավոր ուղիներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերը շարադրվածը, ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, որպես առաջատար կազմակերպություն, գտնում է, որ Կարինե Սամվելի Քոչարյանի «Վարակի համաճարակաբանական հսկողության առանձնահատկություններն ու խնդիրները մանակական բազմապրոֆիլ ստացիոնարում» ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, թեմայի արդիականությամբ, նյութի ծավալով, ժամանակակից մեթոդաբանական մոտեցումներով, ստացված արդյունքների գիտական նորույթով և գործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետին, իսկ հեղինակը արժանի է ԺԴ.00.16 «Համաճարակաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է միաձայն ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդում (06.05.21, արձանագրություն թիվ 2):

Նիստին ներկա էին՝ բ.գ.թ. Ա.Վանյանը (խորհրդի նախագահ), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բ.գ.դ., պրոֆեսոր Յու.Ալեքսանյանը (նախագահի տեղակալ), բ.գ.դ., պրոֆեսոր Գ.Մելիք-Անդրեասյանը (գիտական քարտուղար), բ.գ.թ. Լ.Ավետիսյանը, բ.գ.թ. Ա.Քեչիշյանը, բ.գ.թ. Կ.Գյուրջյանը, բ.գ.թ. Լ.Պարոնյանը, բ.գ.թ. Ա.Ցականյանը, բ.գ.թ. Տ.Խաչատրյանը:

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մարդու և կենդանիների համար ընդհանուր և մակաբուժային հիվանդությունների բաժնի պետ, բ.գ.թ.



Լուսինե Պարոնյան

Լուսինե Պարոնյանի ստորագրությունը հաստատում եմ



ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակազմի քարտուղար



Նարինե Կարախանյան